# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## « ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/25 » գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք.Վեդի, Գայի 2 — 2021-06-14-ին ժամը 15:00

| | |
|---|---|
| Մասնակցում էին՝ | |
| Հանձնաժողովի նախագահ՝ | Խաչատրյան Սամվել |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Ջոհրաբյան Ատոմ |
| | Հակոբյան Անդրանիկ |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Մանուկյան Անուշիկ |
| | Գաբրիելյան Հասմիկ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Լուսինե Բագիկյան |

### 1. Հայտերի բացման մասին

Խաչատրյան Սամվել

1.1 Հրավերով սահմանված ժամկետներում մասնակցության հայտ են ներկայացվել թվով 2 իրավաբանական անձի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Հասցե | Հեռախոս | Էլ. փոստի հասցե | Հայտի ներկայացման օրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | <<Դը Բեստ Շին>> ՍՊԸ | 04230433 | Արարատի մարզ, գ.Գոռավան, Վ.Սարգսյան 49 | 094-00-00-26 | The.best.shin@mail.ru | 2021-06-12 |
| 2 | <<Արարատ-Ճանշին>> ՍՊԸ | 04102505 | Արարատի մարզ, գ.Ավշար, Արարատ-Վեդի ա/ճ աջ մաս, թիվ 2/2 | 093-43-07-32, 091-41-32-75 | araratchanshin@mail.ru | 2021-06-11 |

1.2 Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտը www.armeps.am համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

1.3 **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին.**
Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

1.4 **Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին.**
Գնման ընթացակարգի շրջանակներում բողոքներ չեն եղել:

1.5 **Հակաօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին.** Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

## 2. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին

Խաչատրյան Սամվել

**2.1** Մասնակցի կողմից ներկայացված հայտում՝ հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են, բացառությամբ ''Դը Բեստ Շին'' ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

<table>
<tr><th>Հ/Հ</th><th>Անհամապատասխանության մանրամասն նկարագրությունը</th></tr>
<tr><td>1</td><td>
<<Դը Բեստ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր փաստաթուղթը՝ Հավելված 1.1-ը, ներկայացված է ''ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/25'' ծածկագրով հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի պահանջներին անհամապատասխան, այն է.
''4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝<br>-իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները'':
Մասնակցի կողմից Հավելված 1.1-ով ավտոինենաթափը ներկայացված է 1 տողով, այնինչ 2 ավտոինքնաթափը պետք է ներկայացվի առանձին տողերով՝ յուր. տողը առաջարկվող ապրանքների ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը, արտադրողի անվանումը, տեխնիկ. Բնութ. և երաշխիքային ժամկետները, ինչը համարվում էր հրավերի պահանջ: Ըստ այդմ Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների կազմակերպման գործընթացի>> կարգի 41-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել ''Դը Բեստ Շին'' ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը՝ 15.06.2021թ. ժամը 14:00-ն շտկել և էլեկտրոնային տարբերակով գնահատող հանձնաժողովին ներկայացնել Հավելված 1.1 փաստաթուղթը:
</td></tr>
<tr><td>2</td><td>
<<Դը Բեստ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներկայացված չէ նաև ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/25 ծածկագրով հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, այն է.
<table>
<tr><th>Չափաբաժինների համարները</th><th>Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).</th></tr>
<tr><td>1</td><td>2</td></tr>
<tr><td>1</td><td>Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում – տրանսպորտային:</td></tr>
</table>
Ըստ այդմ Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների կազմակերպման գործընթացի>> կարգի 41-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել ''Դը Բեստ Շին'' ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը՝ 15.06.2021թ. ժամը 14:00-ն շտկել և էլեկտրոնային տարբերակով գնահատող հանձնաժողովին ներկայացնել Լիցենզիաները:
</td></tr>
</table>

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով: Կամ մինչև անհամապատասխանության շտկման համար սահմանված վերջնաժամկետը՝ 2021թ. Հունիսի 15-ին ժամը 14:00-ն, ուղարկել lusine.bazikyan@bk.ru էլեկտրոնային փոստին՝ բնօրինակ տարբերակից սկանավորված ձևով կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

Անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ է սահմանվում **15.06.2021թ մինչև ժամը 14:00**:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ փաստաթղթերը կազմված են Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**3. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**
Սամվել Խաչատրյան

Հարցումներ չեն եղել:
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**4. Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին**
Սամվել Խաչատրյան

Բողոքներ չեն եղել:
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

**5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
Սամվել Խաչատրյան

Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը և հաջորդ՝ հայտերի գնահատման նիստը նիստը հրավիրել անհամապատասխանության շտկման համար սահմանված վերջնաժամկետին՝ **15.06.2021թ-ին ժամը 14:00-ին** Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ, շենքում ՝ Արարատի մարզ ք.Վեդի Գայի 2:
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

***Հանձնաժողովի նախագահ՝*** ____________ **Ս.Խաչատրյան**

***Հանձնաժողովի անդամներ՝*** ____________ **Ա.Զոհրաբյան**

____________ **Ա.Հակոբյան**

____________ **Հ.Գաբրիելյան**

____________ **Ա.Մանուկյան**

***Հանձնաժողովի քարտուղար՝*** ____________ **Լ.Բազիկյան**